Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2012 թ.
ապրիլի 10 -ի N 325 - Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ա. Երիցյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար (հանձնաժողովի նախագահ)
Գ. Բաղալյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Բախշյան	- ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ
Ֆ. Բերիկյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ս. Գալստյան	- ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Ա. Հակոբյան	- ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Մ. Մկրտչյան	- ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Լ. Շահվերդյան	- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ
Ա. Պողոսյան	- ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ
Վ. Պողոսյան	- ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Ռ. Սինոյան	- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Ս. Ազարյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրեն
Ա. Ավալյան	- ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Լ. Միրզոյան	- ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահի տեղակալ (համաձայնությամբ)

Կ. Դավթյան	- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ
Ա. Մարկոսյան	- ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ
Ա. Պողոսյան	- ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի տեղակալ
Հ. Եմիշյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության բնակչության և տարածքների պաշտպանության վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2012 թ.
ապրիլի 10-ի N 325 - Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովին (այսուհետ՝ հանձնաժողով) հաշվետու են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման կարգը հաստատելու մասին» N 1582-Ն որոշմամբ սահմանված կարգով ստեղծված՝ Հայաստանի Հանրապետության մարզային և Երևան քաղաքի՝ համապատասխան ոլորտում իրականացվող աշխատանքները համակարգող հանձնաժողովները:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

3. Հանձնաժողովին կից կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր, որոնք նախատեսվում են առանձին հարցերի վերաբերյալ վնասի գնահատման նեղ մասնագիտական ակտերի կազմման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարզային և Երևան քաղաքի՝ համապատասխան ոլորտում իրականացվող աշխատանքները համակարգող հանձնաժողովների ակտերի ճշգրտման համար: Աշխատանքային խմբերի կազմը ձևավորվում է հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված թեկնածու-

ներից և հաստատվում հանձնաժողովի կամ հանձնաժողովի նախագահի կողմից՝ հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման վերաբերյալ ակտերի ուսումնասիրումը, ընդհանրացումն ու սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության վարչապետի քննարկմանն առաջարկություններ ներկայացնելը.

2) արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման միջոցառումների համակարգման և դրանց օպերատիվ ապահովման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

3) արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած վնասների վերացման և պետական աջակցության վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

6. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, իսկ ըստ անհրաժեշտության՝ նաև արտահերթ:

7. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքում:

8. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում և նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը:

9. Հանձնաժողովն իր նիստերի ընթացքում ընդունում է որոշումներ:

10. Հանձնաժողովի որոշումները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին: Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարը որոշումները կարող է ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին կամ Հայաստանի Հանրապետության կառավարություն:

11. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելիի կողմ ձայներով:

12. Հանձնաժողովի որոշման վերաբերյալ հանձնաժողովի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք, որը կցվում է նիստի արձանագրությանը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

13. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը: Իր բացակայության դեպքում հանձնաժողովի նախագահի լիազորությունների իրականացումը հանձնարարում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկին.

2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը.

3) հանձնաժողովին է ներկայացնում հանձնաժողովի նիստերի օրակարգերի հարցերը.

4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

14. Հանձնաժողովի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու հարցեր,

բ. ներկայացնելու հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ առաջարկություններ,

գ. ծանոթանալու հանձնաժողովի նիստերի արձանագրություններին.

2) պարտավոր են՝

ա. մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին,

բ. կատարել հանձնաժողովի որոշումները:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

15. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը.

2) կազմակերպում է հանձնաժողովի նիստերի գումարման նախապատրաստական աշխատանքները.

3) կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

4) ապահովում է հանձնաժողովի գործունեության մասին տեղեկատվության տարածումը.

5) հանձնաժողովի նախագահին է ներկայացնում հաշվետվություն իրականացված աշխատանքների մասին.

6) կազմակերպում է արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովներից ստացվող նյութերի հավաքումը, մշակումը և դրանք հանձնաժողովի քննարկմանը ներայացնելը.

7) ըստ ուղղությունների՝ ներկայացնում է աշխատանքային խմբերի ստեղծման վերաբերյալ առաջարկություններ՝ արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական

և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման ոլորտում ի հայտ եկած հրատապ խնդիրների լուծման, ինչպես նաև հիմնական խնդիրների իրականացման համար.

8) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ իրականացնում է այլ լիազորություններ:

VII. ՀԱՆՁԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

16. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ